այս ճշմարտութեան քարոզելը։— Սորա հետևողները, որ մի առանձին կրօնական համայնք են կազմում, կոչուում են «Քրիստոնէական կաթուղիկէ եկեղեցի»։ Dowie նոցա մարգարէն և ուսուցիչն է։ Նա միայն ս. Գիրքն է ընդունում և մերժում է բոլոր դաւանական գրուածքները։ —Ներկայ եղող բժիշկներն հաստատում են, որ նա շատ հիւանդների առողջացրել է՝ մանաւանդ ջղային, հոգեկան կամ այնպիսի հիւանդութիւններ, որոնք ծագում են հաստատուն կամքի պակասութիւնից։

Տեղեկութիւններ Տաճկահայքից։—10 մատղաշ հայ աղջիկ, 8—10 տարեկան, որոնց ծնողները Արարկերի կոտորածին սպանուած էին, անցեալները Կ. Պոլիս բերուեցան, որպէս զի այնտեղի որբանոցում պատսպարուին, բայց սուլթանի անմիջական հրամանով նոքա յանձնուեցան տաճիկ ոստիկանութեան։ Հաւանօրէն այս երեխաներն էլ կանչայտանան։

— Շաքիր փաշան Փոքր Ասիայում շրջան անելուց յետոյ հէնց նոր վերադարձել է իւր ուղևորութիւնից։ Նա տեղէ տեղ ճանապարհորդել է, որպէս զի սուլթանի պատուէրի համաձայն երկրի դրութեան մասին տեղեկանայ։ Այս ուղևորութեան հետևանքն է Բ. Դրան այն որոշումը, որ եւրոպական լրագրներում աւետարանական քարոզիչներին (միսսիոնար) ներկայացնեն իբրև իսկական մեղապարտներ տեղի ունեցած խռովութեանց և կոտորածների համար, և ապա բոլոր քարոզիչներին երկրից արտաքսեն։ Տակաւին մի տարի առաջ իրադէ էր պատրաստուած միսսիոնարներին դուրս հանելու համար, բայց այն ժամանակ ստիպուեցան յետ առնել այդ իրադէն։

—Մի պաշտօնական տեղեկութեան համաձայն 1822 թ. Օսման Ա-ի թագաւորութիւնից ի վեր՝ եթէ չհաշուենք 10000-ից պակաս եղած կոտորածների թիւը, 153,000 քրիստոնիաներ են սպանուել։ 1822-ին 50,000 յոյն, 1850-ին 10,000 նեստորական և հայ, 1876-ին 10,000 բոլղար, 1894-ին 12000 հայ, 1895-ին և 1896-ին 60,000 հայ։ Հաւաստի է, որ նորագոյն կոտորածների ժամանակ 60 000 հայ կողոպտուել են և խողխողուել և 300,000 հոգի իրենց ամբողջ կարողութիւնից զրկուել են։ Սոցանից մօտ 50,000 այրի են, մօտ 20,000 բռնաբարուած աղջիկներ և 120,000 որբ։

## ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

*
* *

Ցունիմ քեզ համար, ընկեր Թանկագին,
Սրտառուչ, քաղցրիկ վաղեմի ծայներ.
Ա՛խ, բեկբեկ լարերն իմ խեղճ քնարին
Շուտով սրվեցան երգել սեւ օրեր։

Կռիւ է այս կեանքն, եւ այդ կռուի մէջ
Ո՞րքան անպատրաստ, տկար մեր ոյժեր.
Բայց մենք գնում ենք մի յուսով անվերջ
Եւ չունինք ոչինչ մենք այլ քաջալեր։

Նոյն տկարութեամբ մենք ոտք ենք կոխում
Ահա նոր տարին, եւ առաջներիս
Մեր նոյն առաջնորդ աստղիկն ենք տեսնում—
Այդ յոյսն է, աղօտ ղեռ լոյս է տալիս։

Եւ քանի վառ է, չէ հանգել կրակ,
Յառա՛ջ, միշտ յառա՛ջ, ընկե՛ր Թանկագին.
Կեանքն իբրեւ հեղեղ՝ կոհակ առ կոհակ
Շարժուում է, փրկում միայն քաջերին։

*
* *

Կուզէի հնչէր տաւիղս մեղմիկ
Սրտառուչ նուագ, անուշ դայլայլիկ,
Եւ վառէր սրտեր սիրոյ կրակով
Դիմել դէպի գործ միաբան հոգւով։

Կուզէի հնչէր իմ փողն ահարկու,
Թնդացնէր սրտեր իւր ձայնովն հուժկու,
Քնածը զարթնէր, թոյլն արիանար
Կռուելու ցմահ սուրը գործի համար։

Ց. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.